

ՀԵԿՈՅՑՆԵՐ
RELAZIONI

Բոլոր ժամանակների ու սերունդների ամենաականաւոր հայագէտը թէ՛ Մխիթարեանների մէջ եւ թէ՛ նրանցից դուրս հայագիտութեան փառքը իր մէջ ամփոփած է։ Ղեկոնդ Ալիշանն է։ Լինելով ԺԹ. դարի հայագիտութեան ամենամեծ դէմքը՝ Ալի- շանը իր կատարած մեծարժէք գործերով եւ թողած 60 հատոր շանը իր կատարած մեծարժէք գործերով եւ թողած 60 հատոր կազմող վիթխարի գրական ժառանգութեամբ, այդ լուում հայ- գիտական ուսումնասիրութիւններով դարձաւ հայ մտքի ոսկէ անդաստանի պսակը։

անդամատանի պսակը:

Գրական գործունեությունն աւելի քանի 60 տարի տեւող ժամանակաշրջանում նա ղրսեւորեց իրեն որպէս տաղանդաւոր ժամանակաշրջանում ու արձակագիր, իբրեւ Հայաստան աշխարհի պատ-բանաստեղծ ու արձակագիր, իբրեւ Հայաստանի թարգմանիչ: մաբան, տեղագիր ու աշխարհագէտ, որպէս փայլուն թարգմանիչ:

Ալիշանի հայագիտական ժառանգությունը բաժանվում է հետևյալ փոփոխականների բնագավառներին՝ պատմաաշխարհագրական, պատմաբանա-սիրական եւ տեքստաբանական: Հիշյալ այս ոլորտներում էլ ձեւա-ւորուել են նրա պատմագիտական հայեացքները:

Հ. Ղ. Ալիշանը հայագիտութեան ճիւղերից ամէնից շատ կարեւորում էր պատմութիւնը, քանզի այն կարծիքին էր, որ կարեւորութեանը ճանաչելու համար անհրաժեշտ է ճանաչել այն մարդկութեանը ճանաչելու համար անհրաժեշտ է ճանաչել այն ամէնը, ինչ կատարուել է հնագոյն, հին ու մերձաւոր անցեալում: Իւրաքանչիւր ժողովուրդ ոչ միայն ներկան, այլեւ ապագան կառուցում է իր անցեալի վրայ: Հայ նորդարեան հասարակական-քաղաքական մտքի պատմութեան մէջ Ալիշանն առաջին-ներից է, որ անդրադարձաւ հայրենիքի գաղափարին: «Հայրենի՛ք... ներից է, որ անդրադարձաւ հայրենիքի գաղափարին: «Հայրենի՛ք... Այն քիչ անուններէն մէկն է այս՝ գոր գրեթէ ամօք է բացատրել բարեկիրթ եւ զգօն անձի մը...», քանզի «գրեթէ մոխն առաջ սիրուն կու հասնի, կ'ըմբոնէ, կ'իմանայ գայս, կ'իմանայ՝ գայն նաեւ երբ չկրնար քիչ բառով կամ խօսքով բացատրել, մանաւանդ ուր բաղաճական եւ բարոյական տեսութիւնք՝ ասոր իմաստն այլ այլալաժ կամ զանազա-

նած ըլլան»¹։ Ալիշանը համոզուած էր, որ հայրենիքի խնդիրը քննելիս եւ սահմանելիս չի կարելի սահմանափակուել այն չափանիշներով, ինչը բաւարար է ուրիշ ազգերի համար՝ հայրենիքը բնութագրելիս։ Եթէ ասում ենք, որ ազգի հայրենիքն այնտեղ է, որտեղ նրա անդամները «աւելի բազմաթիւն եւ իրարու մօտ կու բնակին», ապա նման բնութագրումը, որը կարող է բնորոշ լինել ուրիշներին, հայ ազգի համար մասնակի ճշմարտութիւն է միայն, քանզի հայ ժողովրդի ճակատագիրը միանգամայն տարբեր է միւս ազգերի ճակատագրից։

Դարեր շարունակ գտնուելով օտար բռնատիրութիւնների իշխանութեան տակ, զրկուած սեփական պետականութիւնից եւ ենթարկուելով օտարների հալածանքներին՝ Հայաստանի զաւակները յուսահատուած լքել են իրենց հայրենի հողը, իրենց նախնիների երկիրը եւ ցրուել աշխարհով մէկ՝ ապահովութիւն եւ խաղաղութիւն որոնելով ուրիշ ազգերի հայրենիքներում։

Այդ է պատճառը, որ տակաւին դարեր առաջ հայ ազգը «շատ ընդարձակ եւ անհուն երկրի երես սփռած կու տեսնեմք»², - գրում է Ալիշանը։ Ալիշանը հայրենիքը բնորոշում է ոչ թէ հայրենակիցների «սփռուածութեամբ», այլ ուրիշ գործօնով։ Այն է՝ մեր հայրենիքն այնտեղ է, որտեղ մեր նախնիների «ծնարանքն ու բնարանքն են», որոնք «Հայրենեաց կետք եւ կենդրոնք կերելին»³։

Ալիշանի կարծիքով աշխարհագրական տարածքները հայրենիք են դառնում ոչ թէ այն պատճառով, որ դրանց վրայ արդապրում է այս կամ այն ժողովուրդը, այլ այն պատճառով, որ դրանք ժամանակի ընթացքում մշակել, վերափոխել են այդ երկրները իրենց անունով կոչող ժողովուրդների նախնիները, այդ երկրների իսկական տէրերը՝ իրենց ազգային առանձնայատկութիւններին համապատասխան։ Նման հարցադրման դրական եզրակացութիւնը Ալիշանը թողնում է ընթերցողին։ Արեւմտեան Հայաստանը օսմանեան թուրքերինը չէ, այն հայութեան հազարամեակների հայրենիքն է, - եզրակացնում է Ղ. Ալիշանը⁴։

Զանազան տպագիր աղբիւրներից, արխիւներից, աշխարհի նշանաւոր գրադարաններից, Մխիթարեան մատենադարանի ձե-

1 Ա.Լ.ԻՇԱՆ, Հ. Ղ., Յուշիկք հայրենեաց հայոց, Կ. Ա., Վեներտիկ, Ս. Ղազար, 1869, 1։

2 Ա.Ա.Պ., 14։

3 Ա.Ա.Պ., 6։

4 Ա.Ա.Պ.։

ռազրերից հաւաքած նիւթերի հենքի վրայ գրուած Ալիշանի պատմագիտական, բանասիրական եւ աշխարհագրական աշխատութիւնները՝ առաջ քաշած հարցադրումների, պարունակած նորութիւնների, անցեալի այս կամ այն երեւոյթին տուած գնահատականի տեսակէտից շարունակում են պահպանել իրենց այժմէականութիւնը: Բազում օրինակներից յիշատակելի է Ղ. Ալիշանի «Յովհաննէս Սարկաւազ վարդապետ» խորագիրը կրող յօդուածը եւ մեծ հայագէտի դերը Մովսէս Խորենացու «առեղծուածի» կապակցութեամբ:

Ալիշանին էր վիճակուած Յովհաննէս Իմաստասէրի գրչին պատկանող «Բաւ առ ձագն... որ կոչի սարիկ» չափածոյ երկասիրութեան յայտնաբերման, հրապարակման, համապատասխան ծանօթագրութիւններով ու մեկնաբանութիւններով ընթերցողին ներկայացնելու պատիւը⁵: Ալիշանը ճշտում է այդ ստեղծագործութեան հետ կապուած բազում հարցեր՝ սկսած վերնագրից մինչեւ բնագրային առանձնայատկութիւնները: Յովհաննէս Մարկաւազ վարդապետի պօէմի արժէքն ու նշանակութիւնը պատկերացնելու համար ուշադրաւ է Մանուկ Աբեղեանի կարծիքը. «Այս մեծ քերթուածքն իր ձեւով ու բովանդակությամբ մի նշանակալից նորութիւն է մեր հիմ գրականութեան մէջ: Եթէ դա փրկուած չլինէր կորստից, մեր նոր մտաւոր հոսանքի զարգացման տեսութիւնը թերի կմնար...»⁶:

Մի ամբողջ տասնչորս դար անվիճելի ու բացարձակ հեղինակութիւն համարուած Պատմահայր Մովսէս Խորենացին ԺԸ դարի վերջերից ենթարկուեց երոպացի զանազան հայագէտների այսպէս կոչուած «քննափետութեանը» (Մ. Աբեղեան)⁷. Զանքեր չխնայեցին «ապացուցելու», որ Խորենացին գիտաւորեալ կեղծել է իր աղբիւրները, այսինքն՝ յօրինել է գոյութիւն չունեցող հնամենի աղբիւրներ իր «Պատմութիւն հայոց»ը աւելի հաւաստի ներկայացնելու համար, որ նա իւրացրել է իրենից առաջ եղած հայ պատմիչների աշխատութիւնների ամբողջ գլուխներ եւ, ներմուծելով իր «Պատմութեան» մէջ, ներկայացրել է որպէս իր սեփականը, որ Խորենացին գիտաւորեալ լուրջեան է մատնել կամ շուռ տուած է ներկայացրել պատմական մի շարք անձանց գործը եւ հասարակական-քաղաքական նշանաւոր իրադարձու-

5) ՍԱՐՈՒԻՍԱՆԵԱՆ, Ն., Հայ պատմագիտութիւնը XIX դարում եւ XX դարակգրիմ, Երեւան 2003, 392:

6) ԱՔԵՂԵԱՆ, Մ., Երկեր, հ. Դ., Երեւան 1970, 70:

7) Անդ:

Թիւնները, հետեւաբար նրա ստեղծագործութիւնը գիտական հաւաստիութեան տեսակէտից լուրջ կասկած է ներշնչում, որ խորենացին նկարագրել է դէպքեր եւ իրադարձութիւններ, որոնք չեն հաւաստուում օտար պատմիչների կողմից եւ այն: Հայ գիտնականներից Ալիշանն առաջիններից էր, եթէ ոչ առաջինը, որ ձայն բարձրացրեց յանուն այդ խաչակրաց արշաւանքի դադարեցման: Նա եկաւ իր ծանրակշիռ խօսքն ասելու այդ հարցի վերաբերեալ եւ լաւագիտակ ու խոհեմ գիտնականին յատուկ հմտութեամբ ցոյց տուեց խորենացու մեծ ու պատկառազդու դերը հայ ժողովրդի ամբողջ մտաւոր կեանքում: Հետեւողականօրէն պրպտումներ կատարելով Վենետիկի Մխիթարեան միաբանութեան հարուստ մատենադարանում, հնօրեայ ձեռագրերից խնամքով հաւաքելով փաստեր ու տեղեկութիւններ, պատմիչների վկայութիւններ Պատմահօր մասին եւ այդ բոլորն անցկացնելով իր գիտական եզրայանգումների միջով, հաւաքած ամբողջ նիւթը քննելով ժամանակաշրջանի եւրոպական հայագիտութեան առաջաւոր մակարդակի դիրքերից, իր «Մովսէս Խորենացին եւ հայոց պատմութիւնը», «Մովսէս Քերթոյաւայր հայոց» եւ այլ յօդուածներով Ալիշանը վճռական խօսք ասաց Պատմահօր գործի անադարտութեան վերաբերեալ: Խորենացու գիտական սխրանքի, նրա մեծարժէք աշխատութեան մասին Ալիշանը սերունդներին կտակեց իր հեղինակաւոր տողերը: «Աս պատմութիւնը, - գրել է նա, - ինչուան հիմա ճանչցուած թէ՛ Մովսիսի եւ թէ՛ Հայաստանի ամէնէն պատուական գրաւոր գործքը ըլլալով՝ թէ՛ մեր եւ թէ՛ օտար ազգաց առջեւ, չենք կրնար հոս լուրսեամբ անցնիլ, վասնզի անով է, որ Հայաստան իր հիմ ու կորսուած գրականութեան մէկ ճաշակը կ'առնէ: Անով հազար չորս հարիւր տարվն է վեր Հայք իրենց ազգը եւ փառքը կը ճանչնան, ան է բոլոր աշխարհիս դիմաց մեր հիմ ազնուականութեան վկայագիրը, որ ուրիշ ազգ մը չկրնար յափշտակել կամ ուրանալ, անով կրնայ Հայաստան պատմագրութեան մուսային իմացնել, թէ կրնայ առանց առասպելաբանութեան հիմ պատմութիւն մը գրուիլ, անով յունաց եւ հռոմայեցոց պատմիչները բանի մը տեղ սրբագրել եւ տեղ-տեղ հնութեան կամ ընդհանուր պատմութեան վրայ նոր լոյս ծագել, որ ուրիշ տեղէն անկարելի է առնելը»⁸:

Դեռեւս 1840ական թուականներին Վենետիկում, ականատես լինելով իտալական ազգային-ազատագրական շարժման ու յեղափոխական իրադարձութիւններին, վերջիններիս ներշնչմամբ

8 Ա.ԼԻՇԱՆ, Հ. Ղ., *Երկեր*, Երեւան 1981, 141:

նա գրում է «Նահապետի երգերը»՝ մի պահ մոռանալով բանաստեղծական քանքարը կաշկանդող «աքեղայական սեւաթույր վերարկուն»։ «Նահապետի երգերը» դուրս էին Մխիթարեանների պոֆ-զիայի զարգացման ընդհանուր օրինաչափությունից։ Կարելի է նշել, որ Ալիշանից ո՛չ առաջ եւ ո՛չ էլ յետոյ Մխիթարեան բանաստեղծները նման արժէք չեն ստեղծել։

1850-1853ին Հ. Ղ. Ալիշանը զանազան առիթներով լինում է Վիեննայում, Հռոմում, Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում, որտեղ ուսումնասիրում է հայկական ձեռագիր մատենները, հոգեւոր մշակոյթի յուշարձանները, նիւթեր է հաւաքում հայագիտական, յատկապէս պատմագիտական բնոյթի իր յետագայ ուսումնասիրութիւնների համար։ 1858-1861ին Ալիշանը վարում է Փարիզի Մուրատեան վարժարանի տեսչի պաշտօնը⁹։ Այստեղ էլ՝ Փարիզում, Ալիշանը ծանօթանում է Մ. Նալբանդեանի հետ։ Իր «Յիշատակարաններ»ի մէջ վեր հանելով «Նուագներ»ի եւ յատկապէս «Հայրունի» շարքի բանաստեղծական արժանիքները՝ Նալբանդեանն այդ երգերի մասին հիացմունքով է խօսել։

Անձամբ գտնուելով աւստրիական բռնապետութեան դէմ հերոսաբար մարտնչող Վենետիկում՝ Ալիշանը տեսաւ, թէ ինչպիսի սիրանքների է ընդունակ այն ժողովուրդը, որն իրօք կապեւում է լինել ազատ։ Ալիշանը հասնում է այն գիտակցութեան, որ հայ ժողովրդին ազատագրական պայքարի կոչելու համար պէտք է նախ եւ առաջ գրել ժողովրդի լայն զանգուածներին հասկանալի հայերէն աշխարհաբարով։

Հ. Ղ. Ալիշանի ճիշտ ընտրեց պատմական պահը՝ եզրակացնելով, որ ժողովրդի հետ խօսելու, նրան որոշակի պահանջներ առաջադրելու համար հարկաւոր էր նրան հասկանալի թեմաներ ընտրել։ Այդ նշանակում էր հրաժարուել Աստծուն եւ սրբերին փառաբանող խրթին, տաղտկալի ոտանաւորներից ու պօէմներից եւ հայ ժողովրդի պատմական անցեալից վերցնել Արամին, Հայկին, Տիգրանին վերաբերող նիւթերը, փառաբանել նրանց հերոսական գործերը, ժողովրդին ի ցոյց դնել հայրենիքի ազատութեան համար մղած հերոսամարտերը։ Ալիշանը կարողացաւ այդ անել։ Դրա համար անհրաժեշտ էր հակադրուել Մխիթարեան միաբանութեան շուրջ 120 տարուայ պատմութիւն ունեցող պօֆ-զիային, որի առաջնային մոտիւր կրօնն էր, անհրաժեշտ էր հա-

9 ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ, Ն., *մշ. աշխ.*, 385:

կադրուել ինքն իրեն, որն ամենեւին էլ դիւրին չէր¹⁰։ Ալիշանն իր մէջ ուժ ու կարողութիւն գտաւ անելու այդ նորարարական խիզախութիւնը։ Եւ ահա «Բագմալէպ» հանդէսի 1847ի Յունիսեան համարում որպէս այդ խիզախութեան արտայայտութիւն տպագրուում է նրա «Հայոց աշխարհիկ» բանաստեղծութիւնը, որը յետագայում բազմաթիւ վերահրատարակումների արժանացաւ։

Ինչպէս «Հայոց աշխարհիկ», այնպէս էլ 1848ին տպագրուած «Ողբամ գեղ, Հայոց աշխարհ» բանաստեղծութիւնը հայրենի երկրի լաւագոյն ապագայից ձեռք քաշած եւ ամէն ինչ միանգամայն յուռետեսօրէն դիտող բանաստեղծի անմխիթար սուգ ու շիւանլը չէր, ինչպէս երբեմն մեկնաբանուել է¹¹։

Ողբի միջոցով բողոք արտայայտելու եղանակը, որի բնորոշ օրինակներից մէկը Մ. Խորենացու «Պատմութիւն հայոց»-ի յուզիչ վերջաբանն է, մեծ չափով առկայ է պատմագրութեան մէջ։ Այդ էլ Ալիշանը ստեղծագործաբար իւրացրել եւ ներդրել է իր բանաստեղծութիւնների մէջ։ Ալիշանն ինքն էլ ամենայն որոշակիութեամբ զարգացնում է այն միտքը, որ չնայած Հայաստանն այժմ մասնատուած է, բայց կը գայ ժամանակ, նա ոտքի կը կանգնի, կմիաւորուի, կը դառնայ երբեմնի հզօր ու միացեալ երկիրը, զրչի ու գիտութեան իր զաւակներով լոյս կը սփռի ամէնուր։ Եւ փոյթ չէ, որ այդ կը լինի երկարատեւ կռուի վերջին օրը։ Հայ հայրենասէրները պատրաստ են ժամանակից շուտ «հոդ մտնել», միայն թէ վերածնուի նոր Հայաստանը¹²։

Ալիշանի «Հրազդան» բանաստեղծութիւնն իր գեղեցիկ պատկերներով, դիպուկ ու յաջող համեմատութիւններով եւ լեզուական բարձր մակարդակով նրա աշխարհաբար պօէզիայի լաւագոյն գործն է։ Այն գետեղուել է Վ. Բրիւսովի խմբագրած «Поэзия Армении» անթոլոգիայում։ Այդ մասին մեծ սիրով են արտայայտուել Յովհ. Թումանեանը, Աւ. Իսահակեանը, Արշակ Զօպանեանը եւ հայ մշակոյթի շատ ուրիշ ներկայացուցիչներ։

Ալիշանի «Հրազդան» բանաստեղծութիւնից սկսած՝ հայ պօէզիայի մէջ հաստատուն տեղ զբաւեց գետի, լճի անձնաւորման, նրանց միջոցով վշտագին տրամադրութիւններն արտայայտելու եղանակը, որը յետագայում զանազան երանգներով մշակեցին հայ բանաստեղծները։ Այսպէս հանդէս եկան Ռաֆայէլ Պատկանեանի

10 Անդ։

11 Անդ, 387։

12 ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., *Երկեր*, Երեւան 1981, 184։

«Արաբսի արտասուժը», որը գրուած է «Հրազդան»ի որոշակի ազդեցութեան ներքոյ, Միքայէլ Նալբանդեանի «Վազոյ ջրինը», Բաֆֆու «Զա՛յն տուր, ո՛վ ծովակ»ը եւ այլն¹³:

Ալիշանի յետագայ բանաստեղծութիւնների վրայ զգալի կերպով նկատելի է Վենետիկի մարտական շունչը: Հարկաւոր էր պահանջել, որոտալ, մրրկացայտ խօսքերով դիմել փրկութեան ակնկալիքներ ունեցող հայ ժողովրդին եւ կռուի ելնելու կոչ անել նրան: Իրար են յաջորդում մի ամբողջ շարք շունդալից բանաստեղծութիւններ, որոնց մէջ ուրոյն տեղ ունի յայտնի «Բա՛ւ, Փոքրտան» բանաստեղծութիւնը, որը մինչեւ օրս շուրջ 50 վերահրատարակութիւն է ունեցել: Բանաստեղծութիւնը գրուած է մրրկաշունչ ոգով: Հեղինակը ուղղակի, համարձակ ու աներկիւղ դիմում է ժողովրդին՝ գէնքը ձեռքին ոտքի ելնելու, տիրող բռնապետութիւնը թօթափելու անսքող կոչով¹⁴:

Հ. Ղ. Ալիշանի պատմագիտական բնոյթի գործերից կարելի է համարել «Բագմալէպ»ի 1849ի Մարտեան համարներից մէկում լոյս տեսած «Նահապետ» ստորագրութիւնը կրող լաւագոյն գործերից մէկը՝ «Մասիսու սարերն» վերնագրով, որում հեղինակը կիրառել է բնութեան երեւոյթները շնչաւորելու դիմառնութեան մեթոդը: Ալիշանն այս բանաստեղծութեան մէջ յոյս է յայտնում, որ իր սիրելի հայրենիքը ի վերջոյ կը կարողանայ դառնալ այն, ինչ որ էր պատմական ժամանակներում: Իսկ որպէսզի կարողանայ դառնալ, հայերը պէտք է լինեն միասնական ու միաձոյլ, ինչպէս ազատագրական պայքարի ելած ժողովուրդները: Զեյթունի՝ 1862ի ապստամբութեան մարտական տրամադրութիւնը որոշակիօրէն նկատելի է Ալիշանի 1863ին գրած եւ առաջին անգամ «Նուագը» ժողովածուի երրորդ հատորի 1867ի երկրորդ հրատարակութեան մէջ տպագրուած «Հայ հանգար» բանաստեղծութեան մէջ: Այստեղ հեղինակն այն միտքն է առաջ բերելու իր մտադրութիւններից, եւ որ նա կրկին փորձ է անում բերելու իր մտադրութիւններից, եւ որ նա կրկին փորձ է անում արթնանալ, ոտքի ելնել՝ բռնապետական լուծը թօթափելու հարթնանալ, ոտքի ելնել՝ բռնապետական լուծը թօթափելու հարթնանալ, ոտքի ելնել՝ բռնապետական լուծը թօթափելու հարթնանալ: «Հայ հանգար»ը Ալիշանի հայրենասիրական քնարի վերջին մար: «Հայ հանգար»ը Ալիշանի հայրենասիրական քնարի վերջին պոռթկումն էր, նրա բանաստեղծութիւնների բարձրակէտը:

Հ. Ղ. Ալիշանն ապրում էր հայութեան ընթացիկ կեանքով, նրա ներկայով եւ ապագայով: Նա պահանջում էր վերլուծաբար

13 ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ, Ն., մշ. աշխ., 388:

14 ԱՆՂ:

քննել, բացայայտել ոչ միայն անցեալը, այլեւ ներկայ ազգային կեանքի դրական եւ բացասական կողմերը՝ վերջիններիս նկատմամբ համապատասխան ճշգրիտ վերաբերմունք մշակելու համար: Առաջագրելով օտար բռնատիրութիւնից հայրենիքն ազատագրելու, ազգային մշակոյթի զարթոնքն ըստ ամենայնի խրախուսելու եւ զարգացնելու հետ առնչուած հարցերը, խստօրէն նշաւակելով ինչպէս մոլի ազգային սնապարծններին, այնպէս էլ նիհիլիստներին, հիմնականում բանականօրէն եւ իրատեսօրէն ուրուագծելով հայ ժողովրդի անվտանգ կեանքով ապրելու ուղիները՝ Ալիշանն ամենեւին էլ սին պատրանքներ չէր տածում առանց իր բնօրրանի զարգացման, «աշխարհափառացիօրէն գոյատեւելու» կամ «հայրենիքէն դուրս հայ ըլլալու» մասին ժամանակին բաւականին տարածուած մտածելակերպի նկատմամբ¹⁵: Ալիշանը մերժում էր «որտեղ հաց, այնտեղ կաց» հայրենադաւ կարգախօսը: Բանավիճելով նման կարգի բարոյագուրկ կարգախօսի ջատագովների հետ՝ Ալիշանը գրել է այսօր էլ արդիական հնչող հետեւեալ տողերը. «Մեր ազգին սկիզբը ո'չ ի Պոլիս եղեր է, ո'չ Գաղատիա, ո'չ Կաֆա, ո'չ Կալկաթա, ամէնքս ալ մէկմէկէ առաջ հետեւ Հայաստանէն եկած ենք եւ հիմա ուր ալ որ ենք, պանդուխտ ենք»¹⁶: Ազգային-քաղաքական ընթացիկ հարցերում ճիշտ կողմնորոշուելու համար հարկաւոր է հետեւել անցեալի դրական փորձին, ազգանուէր գործիչների օրինակին: «Նախնիք այն ատեն պարծանք են մեզի, երբ մենք ալ իրենց նման ըլլանք, ինչպէս որ մենք անոնցմէ լաւ ըլլանք: Մեր ինչ ըլլալը մեզմէ կախուած է. անոնց պարծանքն ու փառքը մէկ լոյս մըն է մեր նամբուն վրայ, բայց մենք պէտք է աչվնիս բանանք եւ ոտվնիս շարժենք...»¹⁷: Պակաս կարեւոր չէ ազգային գոյապայքարում աշխարհաքաղաքական իրավիճակներում անշեղ կողմնորոշուելը:

Այս առումով չափազանց ուշադրաւ է 1901ի Ապրիլին Հ. Ղ. Ալիշանի հետ հանդիպման մասին Ա. Իսահակեանի 1948ի Դեկտեմբերեան յուշագրութեան հետեւեալ հատուածը. «Ինչ վերաբերում է Հայկական հարցին, Ալիշանն ասաց հետեւեալը, որ ես շարադրում եմ արեւելահայ բարբառով.

- Ի հարկէ, հայ ժողովուրդը լաւ գիտէր, որ իր սեփական ուժերով չպիտի կարողանար թօթափել թուրքական լուծը, ինչպէս առանց Եւրոպայի օգնութեան չպիտի կարողանային ազատուել ո'չ

15 ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ Ն., *նշ. աշխ.*, 389:

16 Ա.ԼԻՇԱՆ Հ. Ղ., *Նրբեր*, Երեւան 1981, 186:

17 Անդ:

Յունաստանը, ո՛չ Բուլղարիան: Հայ ժողովուրդն էլ, նրանց հետևելով, յոյսը դրել էր ֆրիստոնեայ Եւրոպայի օգնութեան վրայ, մեծ, ֆաղափակիրք պետութիւնների մարդասիրութեան վրայ: Այստեղից էլ հայ ժողովրդի մեծագոյն ու բազմադէտ սխալը:

Կոտորածների ժամանակ Թերզեան հայ կարդինալը դիմում է Հռոմ, ընկնում է սրբազան պապի ոտքերը, աղերսում է, որ պապը դիմում անէ ֆրիստոնեայ մեծ պետութիւններին՝ Անգլիային, Ռուսաստանին, Ֆրանսիային, Գերմանիային, որ ջարդարար թուրքի՛ն ձեռքը բռնեն: Սրբազան պապն ասում է. «Այդ ֆրիստոնեայ մեծ պետութիւններն են հայերին կոտորողները, ես որի՞ն դիմեմ»:

Եւրոպական պետութիւնները ո՛չ միայն չօգնեցին եւ չպաշտպանեցին իրենց յուսացող հայ ժողովրդին, այլ պատեհ առիթ գտան շահագործելու հայկական արիւնը: Հայ ժողովրդին վաճառեցին թուրք դահիճին՝ փոխարէն ստացան տնտեսական-առեւտրական մեծ աշնորհներ: Եւրոպացու «քարոյականը աւերած է», քարոյապէս սնանկացած է նա, նախնական մարդու բնական մարդասիրութիւնն էլ չունի անգամ: Նա ստախօս է, շահամուլ է եւ եսական:

Պէտք է վերջ տալ հայերի մէջ եղած յեղափոխական ընկերութիւնների գործունէութեանը, պէտք չէ գրգռել թուրքերի մոնղոլական արիւնը: Պէտք է ընդմիշտ երես շրջել այդ փչացած Եւրոպայից եւ գարշամբով երես շրջել:

Թուրքահայերի պատրիարք Օրմանեանը ֆաղափագէտ մարդ է, բարեկամական յարաբերութիւններ է մշակում նա սուլթանի հետ: Պէտք է աջակցել նրան: Մի բառով պէտք է համակերպել, ուրիշ ելք չեմ տեսնում հայերի համար: Յետոյ աւելացրեց. - Ռուսահայերի վիճակը, համեմատաբար, գէշ չէ. կոտորած, յափշտակութիւն չկայ, բայց այն պատճառով, որ ազգային դպրոցներ չունեն, հայկական դաստիարակութիւն չկայ, լեզու ու մշակոյթ՝ նշման տակ են, այս դրութիւնը ցանկալի արդիւնք չի տալու. Ռուս պետութիւնը իր բերանով է ասում այս: Մի երկու տարի առաջ վաճճեմ է այցելում ռուսական եկեղեցու սինոդի մեծը (երեւի Պոքեդաճոսեւ, սինոդի օստապետ պրոկուրորը) իր ֆարտուղարի հետ: Գրեթէ բոլոր միաբանները նրա պատուի համար ոտի վրայ են եւ ֆայլում են նրա հետ: Նա տեսնում է գեղեցիկ տաճարը, նոյն գրադարան-մատենադարանը, տըպարանը, թանգարանը...

Երբ նստում են հիւրասենեակում մի բաժակ սուրճ խմելու, այդ ռուս մեծ պաշտօնեան, շնորհակալութիւններ յայտնելով միաբաններին, ասում է. «Ես հիացած եմ Ձեր աշխատանքի, համբերութեան եւ սիրոյ նկատմամբ՝ հանդէպ ձեր ազգի, բայց ցաւում եմ,

որ դրանք իզուր ջանքեր են, անօգուտ, աննպատակ: Որի¹⁸ համար են այդ անճանազանությունները, մի փոքր ժողովրդի համար՝ ցրուած երկրի երեսին եւ մատնուած կորուստի: Թուրքիայում կոտորում են հայերիդ շարունակ, Ռուսիայում էլ հայերը ոչ-ոռու ժողովուրդների հետ դատապարտուած են շուտ կամ ուշ ձուլուելու»¹⁸:

Ուղղակի նշենք, որ մահից մի քանի ամիս առաջ Ալիշանի՝ Իսահակեանի հետ հանդիպման ժամանակ արած մտորումները կենսափորձով հարուստ մեծ գիտնականի մտորումներ էին, որոնց հետ լիովին համերաշխ էր շեքսպիրյան իմաստասէր բանաստեղծը: Ալիշանի պատմահասարակագիտական հրապարակախօսութիւնը յանուն ազգային միասնութեան խոհեմ կողմնորոշման կոչող ինքնատիպ մի երեւոյթ է:

Հ. Ղ. Ալիշանն առաջինն էր, որ գործունէութիւն ծաւալեց հայ մշակութային կեանքի այնպիսի մի բնագաւառում, որ մեղմ ասած, աչքաթող էր արուած: Դա հայկական ժողովրդական բանահիւսութիւնն էր: Իրողութիւն է, որ մինչալիշանեան ժամանակաշրջանի Մխիթարեան (եւ ոչ միայն) գործիչների, ստեղծագործողների կարծիքն այս ասպարէզում աւելի քան յստակ էր ու որոշակի, եւ դա էլ բխում էր դասականութեան առաջադիր սկզբունքներից:

Ալիշան հայագէտը հակադրուեց իշխող մտայնութեանը, յորդորեց եւ պահանջեց հիմնաւորապէս զբաղուել հայկական ժողովրդական բառ ու բանի, ազգային երգերի, ժողովրդական ականգնութիւնների հաւաքմամբ եւ ուսումնասիրութեամբ:

Նա բացայայտում է ժողովրդական գրոյցների պատմական տեղն ու դերը հայ ժողովրդի բազմադարեան կեանքում¹⁹:

Չունենալով այս հարցում ոչ մի նախորդ եւ հէնց ինքը լինելով իր իսկ բացած գիտական ճանապարհի առաջնեկը՝ Ալիշանը գրել է գիտականօրէն անառկելի հետեւեալ տողերը. «Ինչպէս քաջութիւն կամ պատկերը կենդանութիւն կու տայ պատմութեան, այնպէս ալ երգը, վասն զի երկուքն ալ քանաստեղծութիւն են: Եւ ազգային պատմութեան աս կերպով կենդանութիւն տուող պատկերներն ու երգերը որչափ որ հին ըլլան, այնչափ ալ աւելի ախորժելի կ'ըլլան ազգասիրաց: Ահա աս գիտնալով մենք ալ, օրագրիս մէջ փափագ ցցուցեր էինք ազգային ռամկական երգեր ունենալու, որ հրատարակեմք ու մասնաւորաց քով գրեթէ անծանօթ մնա-

18 ԻՍԱՀԱԿԵԱՆ, Ա., *Երկերի ժողովածու*, հտ. 5, Երեւան 1977, 12-13:

19 ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ, Ն., *Աշխ.*, 389:

ցած թաղուած գանձերը՝ կերպով մը հասարակաց վայելելու հարըստութիւն դարձնենք»²⁰:

Նա հեղինակել է պատմաբանասիրական բնոյթի տասնեակ աշխատութիւններ, որոնցից շատերը դարձել են հայագիտութեան գրադարանի անանց արժէքներից: Իր հայագիտական գործունէութեան արշալոյսին նա ընթերցողի սեղանին դրեց «Հայոց երգք ուսմկական» հիանալի ժողովածուն (1852): Ապա մէկը միւսի հետեւից հրատարակեց «Նշմարք եւ նշխարք հայկական» (պրակ Ա-Գ, 1870, Բ. տպագրութիւն՝ 1902, նոյնը Ֆրանսերէն՝ 1872, անգլերէն՝ 1875, գերմաներէն՝ 1893), «Բնագիտութիւն Հայաստանի» (1870), «Շնորհալի եւ պարագայ իւր» (1873), «Գիրք վաստակոց» (1877), «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» (1885), «Հայ բուսակ կամ հայկական բուսաբանութիւն» (1895), «Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռուսեմիոյ» (1896), «Հայ Վեներտ կամ յարընչութիւնք Հայոց եւ Վեներտաց» (1896), «Արշալոյս քրիստոնէութեան Հայոց» (1901), «Հայաստան նախնայն գլխնեւ Հայաստան» (յետմահու՝ 1905) եւ այլն: Նմանաբնոյթ երկասիրութիւններից առանձնանում է նրա վերջին՝ երկմասանոց «Հայապատում» մեծադիր աշխատութիւնը (1901-1902): Առաջին մասում անդրադարձել է իր օրերում յայտնի բոլոր հայ պատմիչների կենսագրութեանն ու ժառանգութեանը, իսկ երկրորդում՝ նոյն այդ պատմիչներից քաղուած նիւթերով հիւսել է հայոց ամբողջական պատմութիւնը մինչեւ ԺԶ. դարը: Յատկապէս նշանակալից է «Սոփերք Հայկական» փոքրադիր հատորների հրատարակումը (հատ. 1-22, 1853-1861), որը մի իւրայատուկ հանրագիտարան է անցեալի հայ կեանքի:

Ղեկունդ Ալիշանի ժառանգութեան մէջ ուրոյն տեղ են զբաղեցնում նրա տեղագրական ու պատմաաշխարհագրական բնոյթի երկասիրութիւնները: Որպէս պատմաբան՝ նա յարում էր իր ժամանակներում պատմագիտութեան մէջ լայն տարածում ստացած «աշխարհագրական» ուղղութեանը եւ գտնում, որ ժողովուրդների զարգացման ամենահիմնական ազդակը աշխարհագրական միջավայրն է: Հետեւելով Պատմահօրը եւ խմբագրելով նրա հանրաշատ ասոյթը սիրում էր կրկնել՝ «Զկայ պատմութիւն առանց աշխարհագրութեան»: Այդ ոգով են շարադրուած նրա «Աշխարհագրութիւն քաղաքական» (1851, նոյնը՝ 1852, 1853, 1854), «Աշխարհագրութիւն Հայաստանի» (1853), «Տեղագիր Հայոց Մեծաց» (1855),

20 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., *Երկեր*, Երեւան 1981, 106:

«Երկրագիտութիւն Հայկական» (1881), «Հայկական աշխարհագրութիւն» (1881), «Սկեւռայ վանք. վանավանք եւ Սրբարան» (1884), «Մասիս, ստորագրութիւն Մասիս լեռան» (1890) եւ այլն: Նշուած երկասիրութիւններում նա տեղագրել է պատմական Հայաստանի բոլոր նահանգները, գաւառները, քաղաքներն ու գիւղերը՝ տուել դրանց պատմաաշխարհագրական բնութագրումները, անդրադարձել պատմական իրադարձութիւններին, նկարագրել նիւթական մշակոյթի յուշարձանները²¹: Ալիշանը յայտնի է նաեւ իր բնագրագիտական աշխատանքներով: Հմուտ ծանօթագրութիւններով ու կարճառօտ առաջաբաններով հրատարակութեան է պատրաստել մի շարք հայ պատմագիրներին՝ Վարդան Վարդապետի (1862), Կիրակոս Գանձակեցու (1864), Ղերուբնայ Եղեսացու (1868, նոյն թուականին նաեւ Փրանսերէն), Խոսրով Անձեւացու (1869), Սմբատ Գունդստաբլի (1876), Աբուսահլ Հայի (1901) պատմագրական երկասիրութիւնները²²:

Ղ. Ալիշանը վիթխարի ծրագիր ունէր՝ 20 գրքով լոյս ընծայել Հայաստանի բոլոր նահանգների պատմական աշխարհագրութիւնը: 1870-ական թուականների, նա ձեռնամուխ է լինում այդ Փանտաստիկ ծրագրի իրականացմանը՝ առանց ընդհատելու իր միւս պարապմունքներն ու վանական պարտաւորութիւնները: Միայնակ, առանց օգնականների, առանց Հայաստանում լինելու նա մէկը-միւսի հետեւից ընթերցողի սեղանին է դնում «Երկրագիտութիւն պատկերացոյց» (1881, նոյն թուականին նաեւ համառօտագրուած տարբերակը, նաեւ Փրանսերէն՝ 1899), «Սիսուան. Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ» (1885. նաեւ Փրանսերէն՝ 1899: Նոյն՝ 1885 թուականին լոյս է տեսել նաեւ համառօտ տարբերակը՝ «Համառօտութիւն Սիսուանայ. պատկերագրող եւ աշխարհաբար լեզուով»), «Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց» (1890) եւ «Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի» (1893) հատորները: Անաւարտ են մնացել եւ յետմահու միայն հատուածաբար են լոյս տեսել «Աղուամք» (1970) եւ «Արցախ» (1990) նահանգներին նուիրուած գրքերը, որոնք հսկայական փաստական նիւթ են պարունակում Հայաստանի պատմական անցեալի գրեթէ բոլոր շրջանների վերաբերեալ: Պատմական Հայաստանի նահանգների պատմութեանը նուիրուած այս հա-

21 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Պ., Պատմագիտական ուսումնասիրութիւններ, Երեւան, Ս. Էջմիածին «Հայագիտակ», 2017, 300:

22 Անդ:

տորները ցայսօր մնացել են անզերազանցելի: Թէեւ անցել է մէկ դարից աւելի, սակայն դրանք կարողացել են պահել իրենց գիտական արժէքն ու նշանակութիւնը եւ շարունակում են ուղեցոյց հանդիսանալ մերօրեայ հետազօտողներին: Իզուր չէ, որ դեռեւս իր ժամանակներում տարածուած ասոյթ էր դարձել, թէ «Հայր Ալիշան մեծ ու հեռատես աչք մըն է, որ վեցնտիկ կեցած՝ կրցեր է համբել Հայաստանի ամէն քարերը»²³: Ականաւոր պատմաբանի այս եւ բազմաթիւ միւս աշխատութիւնները, ինչպէս նաեւ «Հայ վեցնտ» (1896), «Հայապատում» (1901), չնայած՝ կրօնական-իդէալիստական աշխարհայեացքով պայմանաւորուած սխալներին, այսօր էլ մեծ արժէք են ներկայացնում հայոց պատմութեան մի շարք հիմնահարցերի ուսումնասիրութեան համար:

Այսպիսով, իր պատմագիտական վիթխարի ժառանգութեամբ եւ պատմագիտական հայեացքներով Ալիշանը նպաստել է հայ պատմահասարակագիտական մտքի ու մշակոյթի զարգացմանը:

ԷԴԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ

Summary

THE HISTORIOGRAPHICAL VIEWS OF Fr. GHEVOND ALISHAN

EDIK MINASYAN

The article shows and analyzes the rich Armenological heritage of the famous 19th-century Armenologist Fr. Ghevond Alishan based on the study of his rich Armenological heritage.

It is known that Alishan's historical-geographical, historical-linguistic and textological views were formed in his works.

Alishan used history the most among the branches of Armenology, because he believed that in order to know humanity, it is necessary to know everything that happened in the ancient, old and recent times. According to him, every nation builds not only the present, but also the future on its past.

Alishan's historical works based on the materials collected from various printed sources, archives, world-famous libraries, and manuscripts of the Mekhitarist Matenadaran continue to be relevant from the point of view of the questions raised, the novelty contained, and the assessment given to this or that phenomenon. From this point of view, his article "*Deacon Hovhannes Vardapet*" is worth mentioning, as well as his role in connection with the "mystery" of Movses Khorenatsi.

Examining all the collected material from the position of the advanced level of European Armenology of the period, in his articles "*Movses Khorenatsi and Armenian History*", "*Movses the Armenian Historian*" and other articles, Alishan spoke decisively about the purity of Khorenatsi's scientific legacy.